ԲԱՐԻ ԵՐԹ, ԴՊՐՈՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՈՒՍՏԱՐԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ 130-ԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս տարի կրթության նախարարությունն առաջին դասարանցիների համար ձեռք է բերել 55300, գերազանցիկների համար՝ 2470, իսկ դասղեկների համար՝ 2530 համակարգիչ:

Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա Վրաստանի հանրային դպրոցների բոլոր աշակերտները կստանան անվճար դասագրքեր: Անվճար դասագրքեր կստանան նաեւ մասնավոր դպրոցների կարիքավոր ընտանիքների աշակերտները, որոնց վարկանիշային միավորը 70001 միավորից ցածր է, նաեւ՝ Աբխազիայի ու Ախալգորիի տարածքների վրացական դպրոցների աշակերտները: Այդ նախագծի շրջանակներում, ընթացիկ տարի տպագրվել է 2246738 գիրք, տետր ու թեստ:

2016-2017 ուստարում Վրաստանի հանրային դպրոցների առաջին դասարանցիների թիվը կազմում է 53540, իսկ հանրային դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը հասնում է 509120-ի:

Ուսումնադաստիարակչական գործընթացը մեկնարկել է նաեւ թբիլիսյան մանկապարտեզներում: Ինչպես տեղեկացրին Թբիլիսիի մանկապարտեզների կառավարման գործակալությունից, այն սկսվել է 165 նախադպրոցական դաստիարակության հաստատություններում:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ ԿԱՉՄ ՈՒ ՊԱՏՐԱՍՏ ԴԻՄԱՎՈՐԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 15-ը մեր երկրում խորհրդանշում է նոր ուսումնական տարվա սկիզբը, որ հիշարժան ու արտասովոր տոն է թերեւս բոլորիս համար: Սա մի նոր փուլ է գիտելիքների ձեռքբերման, աշխարհաճանաչողության, ընկերական մաքուր հարաբերությունների ձեւավորման ճանապարհին:

Այս ուրախալի առիթով, կցանկանայի, նախեւառաջ, շնորհավորել մեր ամենափոքրիկներին՝ առաջին դասարանցիներին, որոնց թիվը Ախալքալաքիի մունիցիպալիտետի հանրային դպրոցներում այս ուստարում հասավ 692-ի: Շնորհավորում եմ նաեւ համայն աշակերտությանը, մանկավարժներին, ծնողներին:

Նշեմ, որ մեր փոքրիկներից ու նրանց դասվարներից յուրաքանչյուրն ապահովված է համակարգիչով, դպրոցները ստացել են գրեթե բոլոր դասագրքերը:

Ախալքալաքիի մունիցիպալիտետի դպրոցների թիվը այսօր հասնում է 65-ի, որոնց 95 տոկոսը ենթարկվել են վերանորոգման, մնացածում առկա իրավիճակը բավարար է ուստարվա ընթացքն ապահովելու համար:

Ուզում եմ շնորհավորել նաեւ արդեն ուսանող մեր շրջանավարտներին, ովքեր հաջողությամբ հանձնել են ընդունելության քննություններն ու ընդունվել տարբեր բուհեր: Մաղթում ենք նրանց կանաչ ճանապարհ եւ նորանոր հաջողություններ:

ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ
Ախալքալաքիի մունիցիպալիտետի հանրակրթական ռեսուրսկենտրոնի ղեկավար

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ՝ Է'Լ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Ախալցիխե քաղաքի թիվ 3 հանրային դպրոցը 2015-2016 ուստարում ուներ 625 աշակերտ: Դպրոցն ավարտեց 38 շրջանավարտ, որից 10-ը ընդունվել են Ախալցիխեի, իսկ 3-ը՝ Թբիլիսիի Զավախիշվիլու անվան պետական համալսարաններ: Ընդունվողներից 6-ը շահել է 100 տոկոսանոց գրանտ: Աշակերտներից մեկը՝ Արեւիկ Կիրակոսյանը, դպրոցն ավարտել է ոսկե մեդալով: Դպրոցի լավագույն աշակերտները ակտիվորեն մասնակցել են տարբեր առարկայական օլիմպիադաների եւ հասել հաջողությունների:

Դպրոցը ստացել է շնորհակալական գովասանագիր պետական լեզվի լավ ուսուցման համար: Մեր դպրոցի աշակերտները մեծ հաջողություններ ունեն սպորտի բնագավառում: Նրանցից 4-ը՝ Հասմիկ Մարգարյանը, Իրինա Հակոբյանը, Սոֆյա Հակոբյանը եւ Սվետլանա Պողոսյանը, դարձան Վրաստանի չեմպիոն թեթեւ ատլետիկայից:

Դպրոցի սաներից մի քանիսը, որոնք գերազանց տիրապետում են անգլերենին, մասնակցեցին «Ֆլեքս» ծրագրին եւ մեկ տարով մեկնեցին ԱՄՆ եւ ուսումը շարունակեցին տարբեր դպրոցներում:

2015-2016 ուստարում դպրոցի մեծ հաջողություններից էր տասներորդ դասարանի աշակերտուհի Անի Մկոյանի հաղթանակը «Էտալոն» ինտելեկտուալ ծրագրում: Շրջանի 40 դպրոցներից Անին հաղթող ճանաչվեց եւ հասավ եզրափակիչ փուլ, որը տեղի ունեցավ Թբիլիսիում:

Ուրախությամբ փաստեմ, որ կազմուպատրաստ ենք դիմավորում 2016-2017 ուստարին: Այս տարի մեր դպրոց են հաճախելու 51 առաջին դասարանցիներ: Ի սրտե շնորհավորում ենք ողջ Վրաստանի աշակերտներին եւ ուսուցիչներին, մաղթում առողջություն ու հաջողություն նոր ուստարում:

ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ախալցիխեի հայկական թիվ 3 հանրային դպրոցի տնօրեն

ԳՐԻ ՈՒ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

20 ՆՈՐԵԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՂՈՂԱՆՋԵՑ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

Մարդաշատ էր մայրաքաղաքի թիվ 104 հանրային դպրոցը: Առաջին զանգի հանդիսավոր արարողությունը բացվեց Վրաստանի, Հայաստանի Հանրապետության պետական, ապա՝ նաեւ դպրոցի օրհներգերով:

Տոնի առթիվ հնչեց կրթօջախի տնօրեն Իրինա Ժամկոչյանի ողջույնի եւ շնորհավորանքի խոսքը: Իր օրհնությունը բաշխելով ներկաներին՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բաշխեց ներկաներին, կարեւորեց հայ դպրոցի դերը ազգային ինքնությունը պահելու գործում:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ դպրոցում հյուրընկալվել էին համայնքի անվանի գործիչներ, ՀԿ ղեկավարներ եւ այլք: Հայ դպրոցը կանգուն պահելու, նորանոր գիտելիքներ, արժեքներ ձեռք բերելու, աշխատասիրություն, ձգտում ու կամք դրսեւորելու հորդորներով հանդես եկան «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի գրողների միության հայկական բաժնի նախագահ Անահիտ Բոստանջյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էմմա Ախտյանը, պատմաբան Աղասի Գեւորգյանը, «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, կրթօջախի վաստակաշատ նախկին ուսուցիչ Նորայր Բաղդասարյանը, «Վրացահայերի միություն» կազմակերպության ծրագրերի համակարգող Մարի Առաքելովան: Տողերիս հեղինակը հայտնեց նոր ուստարվա ընթացքում Վրաստանի կրթության եւ գիտության կողմից իրականացվելիք նոր նախագծերի մասին:

Առաջին զանգի ղողանջների ներքո 20 նորեկներ՝ դասվար Եպրաքսյա Բաղդասարյանի ուղեկցությամբ, առաջին անգամ բացեցին իրենց դասասենյակի դուռը:

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻՑ՝ ՆՈՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔՈՒՄ

Առաջին զանգի արարողությունը մայրաքաղաքի թիվ 103 դպրոցում նույնպես անցավ հանդիսավոր պայմաններում:

Զուգված ու զարդարված օրվա հերոսները՝ 14 առաջինդասարանցիները՝ քիչ հուզված ու շփոթված, անծանոթ աշխարհ էին մտել, գրի ու դպրության աշխարհ: Դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեն եւ ուսմասվար Հասմիկ Պապիկյանը ողջունեցին ներկաներին, մաղթեցին արգասաբեր եւ արդյունավետ ուսումնական տարի: Ընդգծվեց նաեւ այն, որ մի քանի ամսից նրանք պարապմունքները կշարունակեն կրթօջախի նորակառույց շենքում, որը ժամանակակից շինություն է՝ համալրված արդիական տեխնիկայով, ինչը զգալիորեն կնպաստի ուսման որակի էլ ավելի բարձրացմանը: Խոսքով հանդես եկան «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, տողերիս հեղինակը, «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, Նշյալ կենտրոնի կրթության բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը: Ելույթ ունեցողները արժեւորեցին կրթօջախի՝ իբրեւ ավանդույթներով հարուստ երկրի լավագույն դպրոցներից մեկի գործունեությունը, ցանկացան առաջընթաց ու ձեռքբերումներով լի ուստարի: Առաջին դասարանցիներին նվերներ բաժանեցին ավարտական դասարանի սաները, նրանց անունից մաղթանքներ հղեց Աննա Հովհաննիսյանը, նաեւ՝ դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհիներ Լուիզա Մուրադյանն ու Գայանե Մխիթարյանը: Նորաթուխ դպրոցականները մեկիկ-մեկիկ արտասանեցին ոտանավորներ՝ հիացմունք պատճառելով ներկաներին, իսկ ուսուցչուհի Նինա Պարոնյանը փոքրիկներին հանձնեց Առաջին դասարանցու վկայականներ:

Բարի երթ մեր սաներին՝ գիտելիքների ու արժեքների աշխարհ տանող մեծ ճանապարհին:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ

ԵՐԿՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՏԱՐԻՆ ԿՍԿՍՎԻ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ

Վրաստանի քսան դպրոցներում, այդ թվում՝ Թբիլիսիի հինգ դպրոցներում, վերանորոգման աշխատանքների ձգձգման պատճառով, ուսումնական տարին կհետաձգվի առնվազն երկու շաբաթով:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ձեջելավան: Ինչ վերաբերում է մյուս դպրոցներին, ապա, նախարարի խոսքերով, նոր ուսումնական տարվա համար վերջիններս պատրաստ են եւ ժամանակին ստացել են դասագրքեր ու նոութբուքեր: «Դասագրքերի 30 տոկոսը նոր է, 70 տոկոսը՝ հին, եւ այդ 70 տոկոսում կան եռամյա եւ երկամյա վաղեմության դասագրքեր: Ամենավնասված դասագրքերը մենք հանել ենք, այսինքն՝ երեխաները վնասված գրքեր չեն ստանա»,- հայտարարեց Ձեջելավան:

Անդրադառնալով ուսուցիչների մասնագիտական զարգացման թեմային՝ նախարարը նշեց, որ նրանց չեն սպառնա քննություններով կամ հեռացմամբ: Եթե այս կամ այն ուսուցիչը չի կարողանա հանձնել մասնագիտական քննությունը, սակայն ջանադրաբար կաշխատի եւ հիմնախնդիրներ չի ունենա աշակերտների ու տնօրինության հետ, ապա վերջինս չի հեռացվի դպրոցից:

ԲՈՒՀ

ԳԻՈՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՁԵ. «ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՅՆ ՏԵՂԸ, ՈՒՐ ՈՐԱԿՅԱԼ ՈՒՍՈՒՑՈՒՄ Է ԸՆԹԱՆՈՒՄ»

Ինչպես են գնահատում վրաց եւ օտարազգի գիտնականները Գիորգի Շարվաշիձեի թեկնածությունը ռեկտորի պաշտոնում:

Նրանց կարծիքով, բարձրագույն կրթության համակարգում առկա իրավիճակը Շարվաշիձեն բոլորից լավ գիտի:

Կարդում ենք Գիորգի Շարվաշիձեի լուսանկարի մակագրությունը. «Համալսարանը պետք է լինի այն տեղը, ուր բարձրորակ հետազոտություն եւ որակյալ ուսուցում է ընթանում»:

ՄԱՅԱ ՄԻՇԵԼԱՁԵ

Նշում է, որ Թբիլիսիի պետական համալսարանը պետք է լինի այն վայրը, որտեղ բարձրորակ հետազոտություն եւ որակյալ ուսուցում է ընթանում: Անհրաժեշտ է անվերապահորեն պաշտպանել ինքնավարության սկզբունքը, ներդնել կոլեգիալ կառավարման սկզբունքներ եւ հաշվետվողականություն՝ հանրության առջեւ: Տարածաշրջանի մասշտաբով համալսարանի դիրքավորում՝ որպես առաջատար գիտական ու ուսումնական տարածք: Ուսանողական կյանքի կարգավորում եւ ուսանողի կարիերայի կողմնորոշման համակարգի կազմակերպում՝ զբաղվածության հնարավորությունների մեծացմամբ: Գործատուն անպայման պետք է մտնի համալսարանական տարածք: Պետք է վերականգնվի պրոֆեսորների եւ գիտնականների հեղինակությունը, այսպես է կարծում Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Գիորգի Շարվաշիձեն, ով, հաստատված տեղեկությամբ, կմասնակցի Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրություններին:

Համալսարանում նոր ռեկտոր կընտրեն սեպտեմբերին: Կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Գիորգի Շարվաշիձեն, հիրավի, դժվարին շրջանում է նախատեսում զբաղեցնել ԹՊՀ-ի (Թբիլիսիի պետական համալսարան) ռեկտորի պաշտոնը:

Այն տհաճ պատմությունը, որ վերջին ժամանակաշրջանում ԹՊՀ-ում զարգացավ, հիմնախնդիրների շղթա է ներկայացնում՝ սկսած հակադիր կողմերից, ավարտված՝ դրսից արհեստականորեն ղեկավարվող գործընթացներով: Այս պատմության թագը երկրի գլխավոր քաղաքական իրադարձությունն է՝ նախընտրական էյֆորիան: Հենց այս իրավիճակում է Գիորգի Շարվաշիձեն պատրաստվում դառնալ ԹՊՀ-ի ռեկտոր, ով կրթության համակարգում աշխատանքային մեծ եւ բավականաչափ հաջողված փորձ ունի:

Գիորգի Շարվաշիձեն ծնվել է 1963 թվականին, Թբիլիսիում: Գերազանց առաջադիմությամբ ավարտել՝ Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրության բաժինը: Ունի կրթության կառավարման դոկտորի աստիճան: Մասնակցել է մի շարք մասնագիտական վարժանքների, այդ թվում՝ Շվեդիայի հանրային կառավարման ինստիտուտում, UNESCO-ի կրթության պլանավորման միջազգային ինստիտուտում՝ IIEP (Փարիզ, Ֆրանսիա) եւ Համաշխարհային բանկի ինստիտուտում (Բուդապեշտ, Հունգարիա):

10 տարի դասավանդել է թիվ 6 հեղինակային դպրոցում: Աշխատել է որպես փոխանակության ուսուցիչ Հարավային Միլուոքի բարձրագույն դպրոցում (Վինսքոնսի նահանգ, ԱՄՆ): Եղել է Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի ավագ գիտաշխատող, ներկայումս նույն համալսարանում վարում է բարձրագույն կրթության քաղաքականության դասընթացը:

9 տարի շարունակ ակադեմիական աջակցության ծրագրի տնօրենն էր (Բուդապեշտ, Հունգարիա): Ծրագիրը իրականացվում էր շուրջ 20 երկրում, այդ թվում՝ Վրաստանում: Այն օգնում էր երիտասարդ հետազոտողներին ու գիտնականներին՝ սկսել մասնագիտական կարիերա հայրենիքում եւ համալսարաններում աշխատանքի անցնել ըստ մասնագիտության: Այս ծրագրի շրջանակներում, Գիորգի Շարվաշիձեի անմիջական նախաձեռնությամբ, ԹՊՀ վերադարձան 50 հեղինակավոր դասախոսներ:

Գ. Շարվաշիձեն աշխատել է որպես Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության գլխավոր տեսուչ, արտաքին հարաբերությունների վարչության պետ, նախարարի տեղակալ, եղել է Կրթության որակի կառավարման ազգային կենտրոնի տնօրեն: Այժմ նա Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի տեղակալն է:

Հրատարակել է Վրաստանում մասնավոր բարձրագույն կրթության վերաբերյալ մենագրություն, որը UNESCO-ի կողմից տպագրվել է Փարիզում: Մի քանի գիտական աշխատության հեղինակ է, Եվրամիության բարձրագույն կրթության բարեփոխման փորձագետ (HERE), նաեւ՝ տարբեր ժամանակաշրջաններում եղել է Եվրամիության, UNESCO-ի ու Բաց հասարակության ինստիտուտի կրթության փորձագետ:

Այն դեպքում, եթե ԹՊՀ-ի գիտխորհուրդը ռեկտոր ընտրի Գիորգի Շարվաշիձեին, ապա հարուստ փորձը, ինչը տարիների ընթացքում կուտակել է նա, կներդնի համալսարանի զարգացման ու բարգավաճման գործում. «Այն շփումները, որոնք տարիների ընթացքում աշխարհի շատ առաջատար համալսարանների հետ հարաբերվելուց եմ կուտակել, առավելագույն չափով կօգտագործեմ: Կստեղծվեն համատեղ շատ ծրագրեր, եւ կտրվեն համատեղ դիպլոմներ: Արդեն գիտեմ համաշխարհային մի քանի առաջատար համալսարաններ, որոնք այս գործում իմ գործընկերները կդառնան, քանի որ դրանց հետ երկար ժամանակվա համագործակցություն է կապում»,- նշում է Գիորգի Շարվաշիձեն:

2017 թվականի փետրվարին, ԹՊՀ-ն նոր սկզբունքներով պետք է անցնի հավատարմագրում (ակրեդիտացիա): Համալսարանում վերջին ժամանակների զարգացումների ֆոնի վրա շատ հարցեր են ծագում՝ Թբիլիսիի պետական համալսարանը որքանո՞վ կկարողանա այս գործընթացը հաջողությամբ ավարտել: Հենց դրա համար էլ պետք կլինի առավելագույն համակենտրոնացում, որպեսզի համալսարանը 6 ամսում բարձր մակարդակով ապահովի հավատարմագրման թույլատրությունը:

Հետաքրքիր է, թե ինչպես են գնահատում կրթության եւ գիտության նախարարի տեղակալի այս որոշումը Վրաստանի առաջատար հետազոտական ինստիտուտների ղեկավարները:

Է.Անդրոնիկաշվիլու անվան ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Գելա Գելաշվիլի.

- Գիան բավականին քաջատեղյակ է Վրաստանի կրթության առկա իրավիճակին: Որոշակի բարեփոխումների հեղինակը հենց ինքն էր, բայց կարեւորն այն է, որ նա կազմակերպչական լավ ունակությունների տեր է, ինչը համալսարանին մեծ օգուտ կբերի: Նրանից հետո, երբ ԹՊՀ-ին միավորվեց եւս 14 համալսարան, այն վերածվեց բավականին մեծ կազմակերպության: Կարծում եմ, որ լավ կլինի, եթե պարոն Գիան առաջադրվի համալսարանի ռեկտորի պաշտոնում: Այն իրադարձությունները, որոնք վերջին շրջանում զարգացան համալսարանում, հստակ «ձեռք» են պահանջում: Հաստատությունը կազմակերպչական ջիղ ունեցող անձ պետք է կառավարի, ով այս հիմնախնդիրները կկարողանա շտկել:

Առնոլդ Չիքոբավայի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն Ավթանդիլ Արաբուլի.

- Ես ճանաչեցի Գիային՝ որպես նախարարի տեղակալ, ով հմտորեն էր առաջնորդում գործընթացները: Ունի մեծ փորձ ու կրթության կառավարման աստիճան: Ես այլ մանրամասների, նրա գիտական ու ակադեմիական կողմի վերաբերյալ ոչինչ չեմ ասի, իսկ որպես կառավարիչ եւ կազմակերպիչ, նա ոչ մեկին չի զիջում:

Ռաֆայել Ագլաձեի անվան անօրգանական քիմիայի եւ էլեկտրաքիմիայի ինստիտուտի տնօրեն Գրիգոր Տատիշվիլի.

- Պարոն Գիան արհեստավարժ ու կրթված անձ է: Կարծում եմ, համալսարանի ռեկտորի պաշտոնում արժանի թեկնածու է: Նա գիտի, թե ինչպես պետք է աշխատել, կազմակերպչական տաղանդ ունի, ինչը շատ կարեւոր է:

Գիա Շարվաշիձեի ռեկտոր դառնալը գնահատում են արտասահմանյան գիտնականները. Մեծ Բրիտանիայի ատոմային գործակալության ղեկավար, գլխավոր տնօրեն Ռոջեր Քաշմորին, ով CERN-ի գլխավոր տնօրենն էր նաեւ, մեկնաբանում է. «Մենք իրար հանդիպել ենք մի քանի անգամ, երբ գիտական ֆոնդի համանախագահներ էինք: Գիան միշտ աշխատում էր մոտեցնել իրար արմատական դիրքորոշումները, որպեսզի լավագույն արդյունքի հասնեինք: Կարծում եմ, եթե նրան ընտրեն ռեկտորի պաշտոնում, դա կլինի շատ ճիշտ ընտրություն»:

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր եւ կառավարման խորհրդի անդամ, Թբիլիսիի պետական համալսարանի պատվավոր դոկտոր Նիլ Մակփարլեինը նշում է, որ Գիորգի Շարվաշիձեին 10 տարի է՝ ճանաչում է եւ գտնում, որ վերջինս առաջին հերթին շատ ռացիոնալ մարդ է ու շատ լավ է հասկանում բարձրագույն կրթության նշանակությունը: «Իմ կարծիքով, պարոն Գիան այն մարդն է, ով կարող է շատ արդյունավետ իրականացնել աշխատանքը, եւ նրա այս պաշտոնում լինելը միայն դրականորեն կանդրադառնա համալսարանի գործունեության վրա»,- ասում է պրոֆեսորը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԳՐՈՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿ՝ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

- Դուք նշեցիք, որ շահագրգռված անձին ներկայացվող պահանջներից մեկը բազմամյա մշակաբույսերի աճեցման ու խնամքի փորձն է: Որքանո՞վ է հնարավոր, որ նման անձը, որն ունի համապատասխան փորձ, սակայն սեփականության ներքո չունի համապատասխան հողատարածք, ագրոներդրումային վարկով գնի այդ տարածքը եւ դրա վրա էլ աճեցնի կոնկրետ մշակաբույսը:

- Ագրոներդրումային վարկը հողամասի ձեռքբերման համար նպատակայնորեն չի տրվում: Դա կարող է անել շահագրգռված անձը, եթե ունի համապատասխան եկամուտ: Նրան կարող ենք առաջարկել ստանդարտ վարկ հողատարածքի գնման նպատակով, եւ զուգահեռաբար ագրոներդրումային վարկ կտրվի արդեն ձեռք բերված տարածքում բազմամյա մշակաբույսերի աճեցման համար:

- Եթե շահագրգռված անձն արդեն վերցրել է այլ վարկեր, օրինակ, սպառողական կամ հիպոթեքային նպատակով, որքանո՞վ է իրատեսական, որ նա օգտվի նաեւ ագրոներդրումային վարկից:

- Հնարավոր է, եթե շահագրգռված անձն առանց ուշացման մարում է վերցրած վարկերը, ունի լավ վարկային պատմություն ու ստանում է բավարար եկամուտ դրանց մարման համար: Միաժամանակ, ագրոներդրումային վարկի ստացման համար նա պետք է բավարարի այն չափորոշիչներին, որոնց մասին խոսեցի վերեւում:

- Գյուղատնտեսության նախարարության կողմից նախաձեռնվել է «Սերմանի'ր ապագան» նախագիծը, որքանո՞վ է թույլատրելի, որ ֆերմերը, ագրոներդրումային վարկի հետ միասին, օգտվի նաեւ այդ նախագծից:

- Ինչ խոսք, թույլատրելի է, դա է'լ ավելի կնվազեցնի այն ծախսերը, որը ֆերմերը կատարելու է բազմամյա մշակաբույսերի աճեցման համար, քանի որ «Սերմանի'ր ապագան» նախագիծը թույլ է տալիս ֆինանսավորել տնկիների արժեքի 70 տոկոսը եւ ոռոգման համակարգի արժողության 50 տոկոսը:

- Ինչպես նշեցիք, ագրոներդրումային վարկը նախատեսված է բազմամյա մշակաբույսերի համար: Ինչո՞ւ է ընտրվել խնձորի, տխիլի, ընկույզի եւ կիվիի այգիները:

- Բազմամյա մշակաբույսերից ներկա փուլում ընտրել ենք այն մշակաբույսերը, որոնց աճեցման համար իրականացված ներդրումները ֆերմերի համար տնտեսապես արդարացված են եւ իրականացվող նախագիծը մրցունակ է ինչպես տեղական, այնպես էլ՝ երկրի սահմաններից դուրս շուկաներում: Առաջին հերթին, կաջակցենք եւ կֆինանսավորենք խնձորի ինտենսիվ եւ կիսաինտենսիվ այգիները, կիվիի, տխիլի եւ ընկույզի այգիների աճեցումը: Կիվին, տխիլը եւ ընկույզը գյուղատնտեսության ոլորտի արտահանման արտադրանքն է, իսկ ապրանքային խնձորի տեսակի պահանջարկը տեղական շուկայում էլ բարձր է, քանի որ տեղական շուկայի պահանջարկի նշանակալի մասը փոխհատուցվում է ներկրած արտադրանքով: Մենք շարունակում ենք ուսումնասիրությունները, եւ մոտ ապագայում թվարկած մշակաբույսերին, հնարավոր է, ավելացվեն այլ պտուղներ:

- Ձեր կարծիքով, TBC բանկի ագրոներդրումային վարկը կխրախուսի՞, արդյոք, երկրագործությունը նրանց համար, ովքեր ունեն անմշակ հողամասեր:

- Վստահությամբ կարող եմ ասել՝ այո: Դրամական վարկային ռեսուրսի մատչելիության ավելացումը միշտ նպաստել է նոր ներդրումների իրականացման խրախուսմանը: Եթե դիմենք վիճակագրությանը, ապա տասնամյակներ առաջ միայն այգիներից ստացվում է 650-700 հազար տոննա միրգ: Ներկա փուլում մեր երկրում աճեցվում է առավելագույնը 32 հազար տոննայի չափ միրգ: Այս նախագծի միջոցով գտնում ենք, որ կավելանա ժամանակակից այգիների եւ պլանտացիաների տարածքին, ֆերմերին հնարավորություն կտրվի կարճ ժամանակահատվածում յուրացնել բազմամյա մշակաբույսերի աճեցման համար նախատեսված տարածքները եւ երկարաժամկետ ժամանակահատվածում կայունորեն ստանա բարձրորակ բերք: Ակնհայտ է, որ այս նախագիծը կնպաստի բազմամյա մշակաբույսերի աճեցման տարածքների ավելացմանը:

- Հայտնի է, որ TBC բանկը մի շարք նախագծեր է իրականացնում ագրոբիզնեսի զարգացման ուղղությամբ: Ագրոներդրումային վարկից բացի, եւս ի՞նչ նախագծեր է առաջարկում TBC բանկը գյուղատնտեսության շահագրգռված անձանց:

- Ագրոներդրումային վարկը միակ սպասարկումը չէ, որով TBC բանկը փորձում է խրախուսել ագրոբիզնեսի զարգացմանը: Բանկը 2013 թվականից ներգրավված է «Արտոնյալ ագրովարկեր» եւ «Արտադրի'ր Վրաստանում» պետական նախագծերում: Վերոնշյալ նախագծերի շրջանակներում գյուղատնտեսության զարգացման նպատակով, TBC բանկը շուրջ 8 հազար սպառողի հանձնել է 320 միլիոն լարիի վարկ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՊՀ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Սեպտեմբերի 16-ին Բիշքեքում բացվեց ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստը՝ նեղ կազմով, որտեղ քննարկվելու է չորս հարց:

Նիստի աշխատանքին մասնակցում է աշխատանքային այցով Ղրղզստանում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նիստը նախագահում է հյուրընկալող երկրի նախագահ Ալմազբեկ Աթամբաեւը:

Խորհրդի նեղ, ապա դրան հաջորդող ընդլայնված կազմով նիստերում, պետությունների ղեկավարները օրակարգի շրջանակներում կքննարկեն քաղաքական, տնտեսական, հումանիտար, անվտանգության ապահովման ոլորտներում Համագործակցության անդամ պետությունների փոխգործակցությանը, նոր մարտահրավերներին, ինչպես նաեւ սպառնալիքներին, հակազդելուն վերաբերող ավելի քան մեկ տասնյակ հարցեր, որից հետո տեղի կունենա փաստաթղթերի ստորագրման արարողություն: Խորհրդի աշխատանքի արդյունքները ՁԼՄ-ների հետ հանդիպմանը կամփոփի ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Սերգեյ Լեբեդեւը:

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ավարտել է Երեւանի Լ.Տոլստոյի անվան միջնակարգ դպրոցը, սովորել եւ գերազանցության դիպլոմով ավարտել է Երեւանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:

Ունի տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, 32 գիտական աշխատանքների հեղինակ է:

Աշխատել է Հայաստանի պետպլանի հաշվողական կենտրոնում, գիտության եւ մշակույթի գործիչների ասոցիացիայում: Միաժամանակ, դասավանդել է ԵՊՀ-ում:

Ապա՝ որպես փոխտնօրեն, գլխավոր տնօրեն, աշխատել է «Հայէներգո» ՊՁ-ում:

Եղել է Հայաստանի էներգետիկայի փոխնախարար: Ապա զբաղեցրել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի վարչության նախագահ-գլխավոր տնօրենի պաշտոնը:

2010-2011 թթ. եղել է Երեւանի քաղաքապետ:

2011-2016 թթ. աշխատել է որպես «Գազպրոմբանկ» ԲԲԸ առաջին փոխնախագահ: 2013 թվականից «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» խորհրդի անդամ է:

ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱՀՈՎՎԵՆ ԽԱՂԻ ՀԱՎԱՍԱՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Սեպտեմբերի 15-ին, Հայաստանի նորանշանակ վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ, անցկացվեց Հայաստանի կառավարության նիստ:

Կարեն Կարապետյանը ողջունեց նիստի բոլոր մասնակիցներին, ինչից հետո նախարարների պաշտոնակատարները սկսեցին ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված նախագծերը:

Կառավարության նիստի ավարտին, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը հայտարարեց, որ իրենք կպայքարեն արհեստական մենաշնորհների դեմ եւ խաղի հավասար կանոններ կապահովվեն բոլորի համար:

«Կլինեն հավասար կանոններ: Երկրի փոքրությունը միշտ բերելու է նրան, որ որեւէ ոլորտում լինելու է խոշոր խաղացող, այլ հարց է՝ նա արդար մրցակցության արդյունքո՞ւմ է դրան հասնելու, թե՞ ադմինիստրատիվ միջոցներով»,- նշեց վարչապետը:

Վարչապետը հերքեց խոսակցություններն այն մասին, թե չի ցանկանում աշխատել դաշնակցական նախարարների եւ հատկապես՝ Դավիթ Լոքյանի հետ: «Ո՛չ, դա ճիշտ չէ: Ինձ հիմա ավելի շատ հետաքրքրում է, թե նա զարգացման ինչ տեսլական ունի իր ոլորտում, քան թե որ կուսակցության անդամ է»,- պատասխանեց Կարապետյանը:

Գործադիր ղեկավարը հաստատեց, որ կլինեն մարդիկ, ովքեր լքելու են կառավարությունը, սակայն հրաժարվեց անուններ տալ:

ՅՈԹ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Եվրամիությունը Հայաստանում գյուղատնտեսական եւ քաղաքային զարգացմանն աջակցելու նպատակով ՀՀ կառավարությանն է փոխանցել 7 միլիոն եվրո:

ԵՄ-ն 2014թ. դեկտեմբերին հաստատել է գյուղատնտեսության եւ գյուղական համայնքների զարգացման նպատակով Հայաստանի կառավարությանը 25 միլիոն եվրոյի տրամադրումը, ինչն իրականացվում է «Եվրոպական հարեւանության գյուղատնտեսության եւ գյուղական համայնքների զարգացման ծրագրի» շրջանակում: Ծրագրի իրականացման տեւողությունը 3 տարի է, որի ընթացքում 20 մլն եվրո բյուջետային աջակցություն կտրամադրվի Հայաստանի կառավարությանը գյուղատնտեսության եւ գյուղական համայքների կայուն ու համապարփակ զարգացման համար: Միեւնույն ժամանակ, 5 մլն եվրո օժանդակություն կցուցաբերվի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը Հայաստանում ֆերմերների խմբերի եւ գյուղմթերքների արժեքային շղթաների բարելավման համար:

Բյուջետային աջակցությունն իրականացվում է երեք տարվա ընթացքում: 2016 թվականի համար նախատեսված գումարը՝ 7 միլիոն եվրոն, արդեն փոխանցվել է Հայաստանի կառավարությանը:

«ԵՍ ԵՄ» 9-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանի նախագահի բարձր հովանու ներքո, Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ, «Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ՝ սեպտեմբերի 15-17-ը, Հայաստանի Կոտայքի մարզի Աղվերան հանգստավայրում անցկացվեց «Ես եմ» 9-րդ միջազգային երիտասարդական կինոփառատոնը: Այն այս տարի անցկացվեց «Հայ զինվոր» խորագրի ներքո:

«Ես եմ» միջազգային 9-րդ երիտասարդական կինոփառատոնի մրցութային ծրագիրը ներառում էր Հայաստանից, Վրաստանից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղրղզստանից, Գերմանիայից ներկայացված 80 խաղարկային, վավերագրական եւ անիմացիոն ֆիլմ: Այս տարի մրցանակներ են սահմանվել հետեւյալ անվանակարգերում. «Գլխավոր մրցանակ», «Լավագույն ռեժիսորական աշխատանք», «Լավագույն օպերատորական աշխատանք», «Լավագույն խաղարկային ֆիլմ», «Լավագույն վավերագրական ֆիլմ», «Լավագույն անիմացիոն ֆիլմ», «Լավագույն ուսանողական ֆիլմ»:

Փառատոնի ժյուրիի նախագահն է կինոքննադատ Աննա Երզնկյանը, անդամներն են՝ կինոռեժիսորներ Արսեն Գասպարյանը, Մանանա Հակոբյանը, Տարոն Պետրոսյանը, կինոօպերատոր Սուրեն Թադեւոսյանը:

Փառատոնն անցկացվում է 2004 թվականից:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

Հայաստանի նորանշանակ վարչապետ Կարեն Կարապետյանի որոշմամբ, կառավարության աշխատակազմում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ: Կարեն Կարապետյանի որոշմամբ Գուրգեն Դումանյանն ազատվել է կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալի, Արամ Անանյանը եւ Գագիկ Խաչատրյանը՝ խորհրդականի, Տիգրան Կարապետյանը՝ վարչապետի օգնականի պաշտոններից: Կարապետյանի մեկ այլ որոշմամբ Գագիկ Մարտիրոսյանը նշանակվել է Հայաստանի վարչապետի գլխավոր խորհրդական:

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Հայաստանի Ազգային ժողովը 38-ամյա Արթուր Դավթյանին ընտրեց Հայաստանի գլխավոր դատախազի պաշտոնում: Արդարադատության I դասի խորհրդական, իրավաբանական գիտությունների թեկնածու Արթուր Դավթյանը ավարտել է Երեւանի պետական համալսարանի բակալավրիատը, մագիստրատուրան, ասպիրանտուրան, տարբեր ժամանակներում պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Հայաստանի գլխավոր դատախազության համակարգում: Եղել է գլխավոր դատախազության մարդու իրավունքների դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ, Երեւան քաղաքի դատախազ, Հայաստանի գլխավոր դատախազի տեղակալ: Ամուսնացած է, ունի երկու դուստր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՐԵԹԵ ԿԵՍԸ ԲՆԱԿՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանում, 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, մշտական բնակչության թվաքանակը կազմել է 2 միլիոն 995,1 հազար մարդ, որից 1 միլիոն 905,7 հազարը՝ քաղաքներում, իսկ 1 միլիոն 089,4 հազարը՝ գյուղերում: Ամենաշատ բնակեցված մարզերից են Արմավիրի, Արարատի եւ Կոտայքի մարզերը. համապատասխանաբար՝ 266,2 հազար, 258,8 հազար եւ 253,9 հազար բնակչությամբ: Իսկ ամենից քիչ բնակչություն ունեցող մարզը Վայոց ձորինն է՝ 50,8 հազար բնակչով: Երեւանում բնակվում են 1 միլիոն 074,1 հազար մարդ: Բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվության ստացման սկզբնաղբյուրը բնակչության մարդահամարներն են: Բնակչության թվաքանակի ընթացիկ գնահատականը տրվում է բնակչության վերջին մարդահամարի արդյունքների հիման վրա (2011թ. հոկտեմբերի 12-21-ին անցկացված), որոնց ամեն տարի ավելացվում են տվյալ տարածքի ծնվածների եւ եկողների (հաշվառվածների) թվաքանակը, հանվում են մահացածների եւ տվյալ տարածքից մեկնածների (հաշվառումից հանվածների) թվաքանակը:

ՅՈՒՅՆԱՀԱՆԳԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ

Հայաստանի Ազգային արխիվի ցուցադրությունների սրահում սեպտեմբերի 16-ին ներկայացվեց փաստաթղթերի ցուցադրություն՝ նվիրված Հայաստանի Հանրապետության 25-ամյակին: Ցուցադրությունը կոչվում է «Երեք հանրապետություններ»: Այն այդպես է կոչվում, քանի որ 1918 թվականի մայիսի 28-ին հռչակված Հայաստանի պատմությունը շարունակվում է մինչեւ օրս: Ներկայացված փաստաթղթերի մեծ մասը առաջին անգամ է ցուցադրվում: Ցուցադրված փաստաթղթերից են Հայաստանի երեք նախագահների անչնագրերը եւ Շուշիի ազատագրման քարտեզը, որը տարիներ շարունակ խիստ գաղտնի էր:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

20.09.2016. Սուրբ կույսեր Փեփրոնեի, Մարիամեի եւ Մեծ Վարդանի դստեր՝ Շուշանիկի հիշատակության օր

Սուրբ Շուշանիկը Վարդան Մամիկոնյանի ավագ դուստրն էր, որին նախապես Վարդենի էին կոչել, բայց հայոց պատմության եւ վարքաբանության մեջ հայտնի է Շուշանիկ փաղաքշական անունով: Նա ամուսնացած էր վրաց Աշուշա բդեշխի որդի Վարսգենի հետ: Չնայած նրանք 3 տղա եւ 1 աղջիկ ունեին, սակայն ամուսինը, բդեշխ դառնալով, կրոնափոխ էր եղել եւ ամուսնացել պարսիկ Պերոզ իշխանի զոքանչի հետ: Իսկ Շուշանիկը եկեղեցուն կից մի փոքրիկ տնակում, ապրում էր աղոթքներով՝ միշտ մերժելով իր ամուսնու՝ դավանափոխ լինելու առաջարկներն ու սպառնալիքները: Սուրբ Շուշանիկը 7 տարի անընդմեջ իր ամուսնուց հալածվում է՝ ապավինելով միայն իր աներեր հավատին առ Աստված եւ պապից՝ Սուրբ Սահակից իրեն կտակված Սուրբ Ավետարանին: Սուրբ Շուշանիկը 470 թվականին իր կյանքն ավարտում է մարտիրոսական մահով: Ըստ Ոխտանես պատմիչի, նրա գերեզմանը Ցուրտավիում է:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՓԱԿՎԵԼ Է

Հիմնանորոգման աշխատանքներով պայմանավորված՝ 2016 թվականի սեպտեմբերի 14-ից՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման (Մ-6) միջպետական ավտոճանապարհի Վանաձոր-Թումանյան հատվածով երթեւեկությունը ժամանակավորապես կդադարեցվի, եւ այն փակ կլինի տրանսպորտային բոլոր միջոցների համար:

Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարության կողմից սահմանվել են տրանսպորտային երթեւեկության հետեւյալ այլընտրանքային երթուղիները.

Տարանցիկ բեռնատար ավտոմեքենաների եւ երթուղային ավտոբուսների համար՝ Երեւան-Սեւան-Իջեւան (Մ-4), Ոսկեպար-Նոյեմբերյան-Բագրատաշեն-Վրաստանի սահման (Մ-16) ճանապարհահատվածներով: Երեւան-Սպիտակ-Վանաձոր (Մ3), Դիլիջան-Իջեւան (Մ-4), Ոսկեպար-Նոյեմբերյան- Բագրատաշեն (16) ճանապարհահատվածներով:

Տրանսպորտային միջոցների ներհամայնքային երթեւեկությունը դեպի Ալավերդի, Վանաձոր քաղաքներ եւ մոտակա բնակավայրեր կիրականացվի հետեւյալ երթուղիներով. Վանաձոր-Ստեփանավան-Ագարակ-Կողես-Այգեհատ-Օձուն-Ալավերդի-Վրաստանի սահման, Վանաձոր-Դսեղ-Մարց-Թումանյան ճանապարհահատվածներով:

Հայաստանից Վրաստան ուղեւորվող մարդատար եւ միջին բեռնատար մեքենաների վարորդները կարող են օգտվել նաեւ Երեւան-Գյումրի-Աշոցք-Բավրա-Վրաստանի սահման ճանապարհահատվածից:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ԽԱՂԸ ՎՐԱՑԵՐԵՆ՝ ՄԱՐՋԱՆԻՇՎԻԼՈՒ ԲԵՄՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին, Թբիլիսիի Կ.Մարջանիշվիլու անվան պետական ակադեմիական դրամատիկական թատրոնում, Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը ներկայացրեց Նոդար Դումբաձեի «Սպիտակ դրոշներ» պատմվածքի հիման վրա «Մեղադրական եզրակացություն» ներկայացումը՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի բեմադրությամբ:

Ընթերցողին հիշեցնենք, որ վերջերս «Մեղադրական եզրակացություն» առաջնախաղը կայացավ Օզուրգեթիի պետական դրամատիկական թատրոնում՝ Ն.Դումբաձեին նվիրված միջազգային թատերական փառատոնի շրջանակներում: Ադամյանցիների խաղը մեծ ոգեւորություն ու համակրանք էր առաջացրել ինչպես վրացական թատերական անվանի գործիչների, այնպես էլ՝ հանդիսատեսի շրջանում:

Դերասանների արհեստավարժ խաղն ու բեմադրիչի հետաքրքիր հանգուցալուծումը ծափահարությունների անդադրում տարափ առաջացրին նաեւ այս անգամ, Մարջանիշվիլու անվան թատրոնում:

Հատկանշական է, որ «Մեղադրական եզրակացության» մեջ Իսիդորեի դերակատարն է Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի դերասան, Վրաստանի վաստակավոր արտիստ Սոսո Լաղիձեն: Ընդգրկված մյուս դերասանները վիրահայոց թատրոնի երիտասարդ, բայց արդեն կայացած դերասաններն են. Նանո Պողոսյան, Լիանա Օգանեզովա, Սերգեյ Սաֆարյան, Էդուարդ Մուրադյան, Նարեկ Բայանդուրյան, Դավիթ Բարսեղյան, Արամ Միքայելյան, Արթուր Գասպարյան, Արեն Մկրտչյան, Էռնեստ Հարությունյան, Հենրիխ Պետրոսյան, Արթուր Գրիգորյան:

Ներկայացման ավարտին, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Միխեիլ Գիորգաձեն, բարձրացավ բեմ եւ, իր գնահատանքը հայտնելով ադամյանցիներին այս անզուգական խաղի եւ բեմադրիչի հիանալի հանգուցալուծման համար, ուրախությամբ հայտնեց, որ, Վրաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ, սկսվում է վիրահայոց թատրոնի հիմնարար վերանորոգումը, եւ առաջին փուլի համար նախարարությունն արդեն հատկացրել է 1 մլն լարի: Ըստ նախարարի, վերանորոգչական աշխատանքները կսկսվեն տարեվերջին:

ՄԱՆԻԿ ԴԱՆԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԿՍՎՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ընթացիկ տարվա սեպտեմբերից, Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունն սկսում է պետական ծրագրի իրականացումը, որի շրջանակներում, աշխատանք որոնողները կկարողանան երկրի մասնագիտական ուսումնարաններում անցնել վերապատրաստում եւ բարձրացնել մասնագիտական որակավորումը:

Ծրագրին մասնակցել ցանկացող 16-ից բարձր տարիք ունեցողները, մինչեւ սեպտեմբերի 9-ը, պետք է դիմեն ըստ բնակավայրի, սոցիալական սպասարկման գործակալության սերվիս-կենտրոնին եւ անցնեն համապատասխան ընթացակարգը:

Շահագրգռված անձինք անվճար կանցնեն վերապատրաստում այն մասնագիտություններով, որոնց կարիքը աշխատանքային շուկայում առկա է: Առողջապահության փոխնախարար Զազա Սոպրոմաձեն թվարկեց մեծ պահանջարկ վայելող մասնագիտությունները, որոնց թվում էին զբոսաշրջիկների ուղեկցորդի, տուրօպերատորի, ոճաբանի, խառատի, եռակցողի եւ այլ մասնագիտությունները: Աշխատանք որոնողները վերապատրաստում կանցնեն հավաստագրված մասնագիտական կրթության հաստատություններում 2-4 ամսվա ընթացքում:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Գետ Հնդկաստանում: 6.Ե'վ Վեռնոյը, ե'ւ Թրուայան: 9.Արեւմտահայ գրող ... Օտյան: 11.Թռչուն: 13.Վերք (բրբ.): 14.... Սկալա օպերային թատրոնը Իտալիայում: 15.Ե'վ հայկական գյուղ, ե'ւ գինի: 19.Հողի հարկ: 20.«Վրաստան» թերթի ֆոտոլրագրող ... Ակուլյան: 21.Ժամանակի միավոր: 22.«Որոգայթ» ֆիլմի հերոսներից: 23.Դիակ, մահացածի մարմին: 24.Վրաց նկարիչ ... Փիրոսմանի: 27.Դերձակի գործիք: 28.Հերոսուհի «Մեր բակը» ֆիլմում: 30.... Կուլպա «Իմ մեղքը»: 32.... անել, վարել: 33.Վրաց գրող ... Տաբիձե: 36.Հարյուր տարի: 37.Ալբանիայի քաղաքամայրը: 40.Շատ հայտնի քաղաք Նիդերլանդներում: 42.Վառ, պայծառ: 43.Ոչ բուսակեր: 44.Արաքսի անվանումներից: 47.Ամայի, բուսազուրկ: 48.«Լակմե» օպերայի հեղինակը, ֆրանսիացի կոմպոզիտոր Դելիբ ...: 50.Գամ, գաս, ...: 52.Հայոց թագավոր: 53.Դրդող, հրահրող: 55.Թբիլիսահայ կինոռեժիսոր Փարաջանովի «... գույնը»: 57.Ընտանի թռչուն: 58.Սրա, ..., նրա: 59.Գիքորի քույրը: 60.Անտեր, ծնողազուրկ: 61.Համադասական շաղկապ: 62.Լեռ Արեւմտյան Հայաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Դրախտի առաջին տղամարդը: 3.Սպասքի պարագա: 4.Հայոց այբուբենի զինվոր: 5.Առաջին եղբայրասպանը: 6.Իտալիայի ափերը ողողող ծով: 7.Գետ Վրաստանում: 8.Հյուսիսային Կորեայի մայրաքաղաքը: 10.Քաղաք Ֆրանսիայում: 12.Վիրահայոց թեմի առաջնորդ ... եպիսկոպոս Միրզախանյան: 15.Կրծող կենդանի: 16.Սե, վեվ, տյուն, ...: 17.Սուրբ Աննայի դուստրը՝ ... Աստվածածին: 18.« Վրաստան» թերթի թղթակից ... Կիլաձե: 23.Գյուղ եւ շրջան Վրաստանում: 25.Գերմանացի հայտնի ֆիզիկոս ... Նյուտոն: 26.Գծի տեսակ: 29.Հայ անվանի բանաստեղծ: 30.Երրորդ նոտան: 31.Եվրասիական տնտեսական միություն: 33.... Աստված: 34.Ֆիլմ «Մեր ...ը»: 35.«Սարի սիրուն ..., սարի մեխակ բեր» (ժող.երգ): 36.Դարը կազմող: 38.Հայ մեծ վիպասան: 39.«Ինչքան ցավ եմ տեսել ես, ... ու դավ եմ տեսել ես» (Հովհ.Թումանյան): 41.... Քաթիպա: 45.Հերոսուհի Լեւոն Շանթի «Հին աստվածներ»-ում: 46.Բոյով ծառ: 47.Գյուղ, որը գովերգել է Գեւորգ Էմինը: 49.Հայկական ներկ՝ ... կարմիր: 51.Հայ ֆիդայապետ: 54.Քրջոտ, ցնցոտիներով: 56.Անձնական դերանուն: 57.Լոնդոնի ժամացույցը՝ ... բեն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Բակուր: 8.Բորսա: 10.Դարս: 11.Տիզ: 13.Վառեկ: 14.Եկամուտ: 16.Հնար: 17.Հաբ: 19.Կոկիկ: 21.Զառա: 22.Սար: 23.Նկուղ: 27.Ալար: 29.Օմեգա: 32.Լիր: 33.Փուշ: 35.Անուն: 36.Իթակե: 37.Թրաշ: 39.Թաջ: 42.Վազք: 44.Սոմալի: 46.Վալս: 49.Վեց: 50.Հակա: 53.Դհոլ: 54.Շալ: 55.Բիզ: 56.Դիաս: 57.Լոկ: 58.Նանա: 59.Կեռ: 60.Կաղ: 61.Սան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ղազարոս: 2.Կրակ: 3.Իբսեն: 4.Երկար: 5.Պատուհաս: 7.Ուղեծիր: 9.Եզ: 12.ԻՏԱՌ: 15.Կակուլի: 18.Բահ: 20.Կարեն: 24.Կալոշ: 25.Ղարիբ: 26.Ծանր: 28.Բուկ: 30.Մայա: 31.Գուբ: 33.Փաշա: 34.Շենք: 38.Աբով: 40.Ջուլիակ: 41.Բացակա: 42.Վիհ: 43.Ձիկինա: 45.Մեշոկ: 47.Ադի: 48.Սոսե: 51.Աբաս: 52.Ազան:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445